

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՊԱԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐՔԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՍՈՑԻՈՄՇՆԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ

ԱՇՈՏ ՍՈՒՆԱԿՅԱՆ

Ապակառուցողական վարքի դրսևորման մեջ առանձնահատուկ դեր են խաղում սոցիոմշակութային գործոնները: Ի տարբերություն կենդանիների՝ մարդը ձևավորվել է ոչ միայն կենսաբանական, այլև սոցիոմշակութային էվոլյուցիայի արդյունքում: Եվ պատահական չէ, որ իր սոցիոմշակութային հղկվածությամբ նա տարբերվում է կենդանական աշխարհի մյուս ներկայացուցիչներից: Ի դեպ, չտարբերվելով կենսաբանական հատկանիշներով՝ բազմաթիվ սոցիալական խմբեր կարող են միմյանցից տարբերվել իրենց սոցիոմշակութային չափորոշիչներով, ինչը երբեմն դառնում է փոխադարձ թշնամանքի և լարվածության պատճառ: Մարդն իր ապակառուցողական վարքը որդեգրել է քաղաքակրթությունից՝ լինելով դրա ստեղծողը¹: Դեռևս նախնադարյան մարդկային համակեցությունների միջև եղել են սոցիոմշակութային արժեհամակարգերի էական տարբերություններ: Մարդիկ այն ժամանակներում համոզված էին, որ «նրանք»՝ օտար սոցիոմշակութային արժեքներ կրող ցեղախմբերն ու տոհմերը, «մենքի»՝ սեփական ցեղախմբին կամ տոհմին պատկանող մարդկանց համար վտանգավոր թշնամիներ են, և հենց «նրանց» դեմ է ուղղված եղել այն ժամանակվա մարդու ապակառուցողական վարքը: Այլ սոցիոմշակութային բնութագրիչներով (դաջվածքներ, ոսկրե շղթաներ, գործիքներ, զենքեր և այլն) մարդ նկատելու դեպքում հարձակվում և սպանում էին²: Ավելին, սեփական ցեղախմբից որևէ մեկի մահվան հանգամանքը վերագրվում էր հարևան օտար ցեղախմբերի կողմից հյուսված կախարդանքին, և հրաժեշտի արարողությանը հաջորդող գիշերը արյան ծարավով տոգորված մտնում էին նրանց բնակատեղի, ավերում ամեն ինչ, սպանում քնած տղամարդկանց ու երեխաներին: Նախնադարյան մարդու ապակառուցողական վարքի առավել ծայրահեղ դրսևորումներից մեկը մարդակերությունն է (կանիբալիզմ), ինչն իրենից ներկայացնում է «այլոց» հոգեֆիզիոլոգիապես տիրելու և ինքնահաստատման լավագույն մեխանիզմ: Այդ ժամանակաշրջանի մարդկանց ապակառուցողական վարքի հատուկ դրսևորում էր նաև «արյան վրեժի» գաղափարը: Բոլոր ընդհարումներում թշնամի ցեղախմբերը ձգտում էին ոչնչացնել հակառակորդի տղամարդկանց և երեխաներին այն պատճառով, որ հետագայում նրանց սերունդները չկարողանան վրեժխնդիր լինել իրենց սպանված նախնիների համար: Դեռևս խակ պատանի էր համարվում այն տղամարդը, ով երբևէ թշնամի չէր սպա-

¹ Տե՛ս **Антонян Ю. М.** Психология убийства. М., 1997, էջ 32:

² Տե՛ս **Поршнев Б. Ф.** Социальная психология и история. М., 1979, էջ 82:

նել: Վերջինիս նույնիսկ զրկում էին հասուն տղամարդու բոլոր արտոնություններից, այդ թվում նաև՝ կին ունենալուց, ինչը կրկին խոսում է մարդու ապակառուցողական վարքի դրսևորման նախնական ձևերի մասին³:

Հետագայում սոցիոմշակութային արժեհամակարգերի տարբերության վրա հիմնված ապակառուցողական վարքը ձեռք բերեց առավել լայն և բազմակողմանի ընդգրկումներ: Աշխարհագրական նոր տեղանքների բացահայտման ընթացքում եվրոպացիները գրավում էին գաղութներ, կոտորում տեղաբնիկներին (հնդկացիներ, ացտեկներ, ինկեր և այլն), թալանում ու ավերում նրանց տները, վերացնում մշակութային արժեքները: Սոցիոմշակութային արժեհամակարգի տարբերության վրա հիմնված ապակառուցողական վարքի դրսևորման ձևերից է նաև կրոնական անհանդուրժողականությունը՝ ի դեմս ինկվիզիցիայի, խաչակրաց արշավանքների, կրոնական արմատականության վրա հիմնված պատերազմների:

Ազգերի սոցիոմշակութային տարբերությունների վրա հիմնված ապակառուցողական վարքի զանազան դրսևորումներ կան նաև մարդկության պատմության արդի փուլում, այն տարբերությամբ, որ այժմ «յուրայինի» և «օտարի» երկսայրությունն արտացոլվում է արդեն գաղափարախոսության մեջ: Ինչպես նկատում է Կ. Ս. Հաջիևը, գաղափարախոսության ամրակայման գործում արտաքին հակազդափարախոսության առկայությունն առավել կարևոր է, քան առաջինի սկզբունքները որդեգրած անհատների համախմբվածությունը: Նույնիսկ եթե արտաքին որևէ հակազդեցություն չկա, ապա հարկավոր է այն ստեղծել⁴: Այսպես, նացիստական գաղափարախոսությունն արտահայտվում է «Մենք ընտրյալ ժողովուրդ ենք, որի առաքելությունն է համաշխարհային նոր կարգի ստեղծումը» բանաձևով: Գալով իշխանության՝ Հիտլերը պնդում էր, որ Գերմանիայի սոցիալ-տնտեսական խնդիրները կլուծվեն, եթե վերանան իրենց «թշնամիները»՝ կոմունիստները, ժողովրդավարները, հրեաները, գնչուները, որոնք չէին համարվում իսկական, զտարյուն մարդիկ:

Քանի որ հասարակությունը մարդու գոյության միջոց է, ապա վերջինիս գործունեությունը հարկ է սահմանել որպես հասարակական իրականության «ճարտարապետական նախագծում»⁵: Հասարակության մեջ մարդը վերածվում է անձի, փոխակերպվում են նրա պահանջմունքները՝ դրանցում ձևավորելով այնպիսի նոր որակներ, ինչպիսիք են ինքնաիրացման, ուրիշներին գերազանցելու, շրջապատում ազդեցիկ իշխանություն ձեռք բերելու, որոշակի գաղափարների ու արժեքների պատկանելու ձգտումները: Դրանք էլ իրենց հերթին կարող են բավարարված լինել միայն հասարակական միջավայրում: Մարդու էական առանձնահատկություններից մեկն այն է, որ սովորաբար նա իր հասարակական գործունեության ընթացքում հակված է լինում դուրս գալ սեփական հնարավորությունների շրջանակներից, շրջանցել բնության և պատմության օրենքներն ու օրինաչափությունները, ինչը խոսում է նրա ստեղծագործական, արար-

³ Տե՛ս Скрипник А. П. Моральное зло в истории этики и культуры. М., 1992, էջ 32:

⁴ Տե՛ս Гаджиев К. С. Политическая идеология: концептуальный аспект // «Вопросы философии», 1998, № 12, էջ 5:

⁵ Волков Ю. Г., Поликарпов В. С. Интегральная природа человека: Естественнонаучный и гуманитарный аспекты. Ростов-на-Дону, 1993, էջ 74:

չագործական առաքելության մասին: Ստեղծագործական ջիղը ցանկացած մարդու դարձնում է ինքնահաստատվող այնպիսի անհատ, որն ինքն է սեփական կյանքի նախագծողն ու ճարտարապետը, ու դա նրան ստիպում է դրսևորել թե՛ կառուցողական և թե՛ ապակառուցողական վարք: Ըստ էության, երկու դեպքում էլ անհատը խույս է տալիս անցանկալի ներկայից. առաջին դեպքում նա հակված է իր համար ձևավորելու նոր, բարենպաստ սոցիալական միջավայր, իսկ երկրորդ դեպքում ընդգծված մերժողականությամբ ոչնչացնում է իրեն շրջապատող իրականությունը: Առաջինը կարելի է անվանել ապակառուցողական-ստեղծագործական, իսկ երկրորդը՝ մերժողական-ապակառուցողական վարք⁶: Արդյունքում՝ թե՛ ստեղծագործական և թե՛ մերժողական վարքի ձևերը միտված են միևնույն նպատակին՝ պահանջումների բավարարմանն ու ինքնահիրացմանը:

Ստեղծագործական և ապակառուցողական վարքի առնչությամբ Յու. Կոզեցկին իրավացիորեն նկատում է, որ մարդու բնութագրիչ հատկանիշներից մեկը «տրանսգրեսիա» երևույթն է, ինչն իրենից ներկայացնում է նախկին ձեռքբերումների և արդյունքների գերազանցման մղում և ներկայիս կարգավիճակից դուրս գալու ցանկություն⁷: Այս հատկության շնորհիվ մարդիկ առաջ են շարժվում՝ պարզեցնելով իրենց տեսադաշտը, ընդլայնելով ազատության սահմանները, ստեղծելով նյութական և բարոյահոգեբանական նոր արժեհամակարգեր, զարգացնելով գիտությունը, տեխնիկան, արվեստը: Մարդիկ մշտապես ձգտում են ինքնահաստատման և հակված են մրցակցության, որովհետև նրանցից յուրաքանչյուրն անկրկնելի է ոչ միայն գեներտիկական, այլև սոցիոմշակութային ծածկագրով: Այդ պատճառով նրանք անվերջ համեմատում են իրենց «ուրիշների» հետ ու ջանում արժանանալ հարգանքի և ուշադրության, գտնել իրենց նշանակալից տեղն ու դերն այս կյանքում⁸: Սակայն պահանջումները բավարարելու ուղիներն իրենց բնությով կարող են լինել թե՛ ապակառուցողական-ստեղծագործական և թե՛ ավերիչ-ապակառուցողական: Դրանց խորքային պատճառներից մեկը բնությունից և հասարակությունից մարդու օտարվածության հանգամանքն է: Ստեղծագործելու և նորարարության բնազդը մարդու՝ որպես տեսակի ամենաէական բնութագրիչներից մեկն է, որը բազմադարյա զարգացման և էվոլյուցիայի հետևանքով որոշակի փոփոխություն մտցրեց նրա առօրյա հարմարվողական գործունեության մեջ՝ ի վերջո օտարելով նրան ինչպես բնության, այնպես էլ հասարակության հետ ունեցած նախկին կենդանի հարաբերություններից: Նրա ստեղծագործական գործունեության արգասիքները, որոնք նյութականացվել են քաղաքակրթական ձեռքբերումներում (շուկա, տեխնիկա, զանգվածային լրատվամիջոցներ և այլն), վերածվել են ինչ-որ անկախ մեծության՝ վեր բարձրանալով իրենց իսկ ստեղծողից՝ մարդուց, և նույնիսկ ճնշելով նրան: Մարդու ձևավորած աշխարհը փաստորեն դարձել է նրա տիրակալը: Այնքան փափագված ազատությունը մեկուսացրել է նրան՝ արթնացնելով նրա ներսում միայնության, անզորության և տագնապի ծանր զգացողություն: Ազատությունը մարդու համար դարձավ ոչ միայն և ոչ այնքան դրական

⁶ Տե՛ս **Карлоф Б.** Деловая стратегия (концепция, содержание, символы). М., 1991, էջ 28:

⁷ Տե՛ս **Козелецкий Ю.** Человек многомерный (Психологические эссе). Киев., 1991, էջ 47:

⁸ Տե՛ս **Кьюси П.** Этот человеческий мир. М., 1988, էջ 56:

արժեք, որքան պատուհաս: Ազատության և անվտանգության ծգտման երկսայրությունն, ըստ Է. Ֆրոմի, մարդու կյանքում կատարում է կարևորագույն ուղղորդիչի դեր: Այդ հակասական երկսայրությունն առաջացնում է ապակառուցողական վարք, որի միջոցով մարդը ենթագիտակցորեն փախչում է իր իսկ ազատությունից⁹: Այսպիսով, օտարումը դրսևորվում է նրանում, որ մարդը հակադրում է «իրեն» և «ուրիշներին», կորցնում որոշակի արժեհամակարգի պատկանելու և դրա մեջ նույնականանալու հատկությունը, ինչն էլ դառնում է նրա ապակառուցողական վարքի տարբեր դրսևորումների պատճառ:

Մարդու ապակառուցողական վարքի դրսևորման սոցիոմշակութային հիմքերի մասին վերլուծությունների շարքում առանձնահատուկ ուշադրության է արժանի Է. Դյուրքհայմի տեսակետն, ըստ որի՝ մարդուն հատուկ է որոշակի սուրբ գաղափարների, արժեհամակարգերի պատկանելու պահանջմունքն ամեն անգամ, երբ խորանում է տվյալ հասարակության նորմատիվ-արժեքային ճգնաժամը, ինչն Դյուրքհայմն անվանում է «անոմիա» (չկարգավորվածություն, անհավասարակշռվածություն)¹⁰, մեծանում են նաև ապակառուցողական վարքի դրսևորման հնարավորությունները: Սոցիոմշակութային նորմերն ու չափորոշիչները կարևոր դեր են խաղում մարդկանց կյանքի կազմակերպման գործում: Սոցիոմշակութային հարաբերությունների ողջ ցանցի առավելագույնս համահարթեցված լինելու դեպքում առաջանում է հասարակական շղթայակցման բարձր աստիճան: Մարդիկ իրենց համարում են հասարակական միջավայրի անքակտելի մաս՝ զերծ մնալով սոցիալ-հոգեբանական մեկուսացվածության, միայնության և լքվածության զգացողություններից: Հասարակական կարգի նման ձևը սովորաբար կասեցնում է մարդուն բնորոշ ապակառուցողական վարքի ցանկացած ձև: Քանի որ այդ հասարակությունը լիովին համահարթեցված է և նրա անդամները զգում են այդ միասնությունը, ուստի դրա մշակույթը նույնպես համահարթեցվում է և դառնում միասնական: Իսկ բարոյանորմատիվ արժեքները դիտվում են իբրև վերանձնային, անվիճարկելի և նույնիսկ սուրբ մեծություններ: Բնականաբար, նման սոցիոմշակույթը չի կարող որևէ կերպ խրախուսել ապակառուցողական վարքի ցանկացած ձև:

Ընդհակառակը, շղթայակցման ցածր ցուցանիշ ունեցող հասարակությունը, որի անդամները բավականին թույլ են կապված իրար, ինչպես նաև տարբեր օրինակելի (ռեֆերենտ) խմբերի հետ, ունի սոցիոմշակութային նորմերի բարդ ու խճճված ցանց, մասնատված և հարաբերականացված արժեհամակարգ, որն ընդունելի չէ ամենքի կողմից և դիտվում է լուրջ որպես անձնական նախընտրության օբյեկտների ամբողջություն, իրենից ներկայացնում է ապակառուցողական վարք ձևավորող մի հսկա մեքենա: Սակայն հասարակական հարաբերությունների մեջ ծայրահեղորեն տարրալուծվելու դեպքում նույնպես անհատի վրա կարող է գործադրվել որոշակի ճնշում՝ կտրուկ սահմանափակելով նրա ազատությունը, պահանջմունքները, իմաստազրկելով նրա կյանքը:

⁹ Տե՛ս **Փրոմմ Է.** Бегство от свободы. М., 1989, էջ 23:

¹⁰ Տե՛ս **Դյուրքհայմ Է.** Самоубийство // Тексты по истории социологии XIX–XX вв. Хрестоматия. М., 1994, էջ 312-327:

Այսպիսով, մարդուն անհրաժեշտ է ունենալ որոշակի խմբի պատկանելու իրական զգացողություն՝ առաջնորդվելով նորմատիվ-արժեքային հստակ կողմնորոշիչներով: Եթե հասարակական տվյալ համակարգը մարդուն չի մատուցում նրա կյանքը վերահսկող որոշակի նորմեր, կամ, ընդհակառակը, դրա արժեհամակարգը ծայրահեղ խիստ է և ազատություն սահմանափակող, ապա մարդու մոտ զգալիորեն ուժեղանում են ապակառուցողական վարքի դրսևորման ձևերը:

Ապակառուցողական վարքի սոցիոմշակութային հիմքերին են պատկանում նաև մարդու օբյեկտիվ առանձնահատկությունների ու հնարավորությունների (շնորհ, տաղանդ) և հասարակական համակարգում նրա զբաղեցրած դիրքի, նրա պահանջմունքների և դրանց բավարարման պայմանների անհամապատասխանությունը, հասարակական անկարգավորվածությունը, ինչպես նաև անհատի կամ նրա խմբի սոցիալական կարգավիճակի կտրուկ փոփոխությունը¹¹: Իր նախկին սոցիալական կարգավիճակից զրկված սահմանային խավը սովորաբար աչքի է ընկնում արմատական-ծայրահեղական դիրքորոշումներով, ինչը հղի է բռնության տարբեր ձևերի կիրառմամբ, հետևաբար նաև՝ ապակառուցողական վարքով: Նման մարդկանց ինքնագիտակցությունը հիմնականում գործում է երկու ձևով. կամ ապրում է աննկատ կենսակերպով, կամ էլ՝ հասարակական կարգերի նկատմամբ ակնհայտ թշնամանքով՝ պատրաստ կործանարար գործողությունների: Նրանք կամ չափազանց պասիվ են, կամ էլ ծայրահեղ ագրեսիվ և հեշտությամբ խախտում են գործող բարոյաիրավական նորմերը:

Ապակառուցողական վարքի դրսևորման քանակը պայմանավորվում է ընդհանուր սոցիալ-տնտեսական զարգացածության ցուցանիշներով՝ գործազրկությամբ, սոցիալապես անապահով լինելով, զարգացման հեռանկարների բացակայությամբ, ինչպես նաև անհատի սոցիալացման պայմաններով, քանզի մարդու բնույթն ու խառնվածքն ամբողջանում են նրա նմանակման հատկության շնորհիվ: Ընդհանրապես, անբարենպաստ միջավայրում ձևավորված ընտանիքներում, որտեղ անվերջ են տարածանություններն ու բախումները, բացահայտորեն կիրառվում են բռնատիրական սկզբունքներ և երեխաների դաստիարակման մեթոդներ, որոնք, նսեմացնելով երեխաներին և ոտնահարելով նրանց ինքնասիրությունը, պատճառ են դառնում հետագա ապակառուցողական վարքի զանազան դրսևորումների: Այդ երեխաները, փոքր տարիքում ականատես լինելով բռնի և ագրեսիվ հարաբերությունների, նույն հոգեբանությամբ էլ դուրս են գալիս հասարակական լայն միջավայր և հիմնականում դրսևորում նույնատիպ ապակառուցողական վարք:

АПОТ СОХАКЯН – Социокультурные основания деструктивного поведения. – Значительное влияние на деструктивное поведение человека оказывают социокультурные основания. К их числу относятся, прежде всего, информационные различия между представителями отдельных социокультурных групп, а также растущее отчуждение человека от природы и общества. Стремясь преодо-

¹¹ Տե՛ս **Гилинский Я. И.** Творчество: норма или отклонение? // «Социс», 1990, № 2, էջ 45-46:

леть тотальное отчуждение, люди совершают трансгрессивные действия – конструктивные или деструктивные, позволяющие им оказывать влияние на окружающий мир и реализовывать свой творческий потенциал. Деструктивное поведение является попыткой разрешить противоречия между универсальностью, тотальностью человеческой жизнедеятельности и её социальной формой, между базальными потребностями людей и социально обусловленными возможностями их удовлетворения. Как показывают исследования, деструктивные тенденции усиливаются в условиях ценностно-нормативного кризиса в обществе. Именно отсутствие общепринятой системы ценностей, единой идеологии приводит к росту изолированности и отчужденности отдельных членов общества и, как следствие, – к деструкции. Однако и чрезмерное интегрирование человека в общественные отношения, при котором подавляется его индивидуальность, ограничивается свобода и уменьшается возможность самореализации, также способствует росту деструктивных устремлений. Потенциальным источником деструкции является резкая нисходящая или прерванная восходящая социальная мобильность. Также росту разрушительных импульсов способствует увеличивающееся число бытовых, экономических проблем, обилие отрицательной, пугающей информации, изменение социальной роли семьи. Определенное влияние на формирование деструктивной деятельности оказывают и условия социализации индивида. Итак, понять сущность деструктивного поведения человека возможно, лишь рассматривая её в социокультурном контексте.

ASHOT SOKHAKYAN – *Socio-Cultural Bases of Destructive Conduct.* – Socio-cultural roots have some substantial influence on human beings' destructive conduct. These include, above all, information differences between members of particular socio-cultural groups and human being's estrangement from the nature and society. In order to overcome the total alienation people accomplish, perform transgress activities – contractive or destructive, that let them influence on environmental world and realize their creative potential. Destructive conduct is try to solve contradiction between the universality, totality of human vital activity and its social forms, between human basic needs and socio-conditional opportunities of satisfying them. Research has shown that destructive trends usually increase in conditions of valuable-normative crises of society. It is the lack of generally accepted system of values and united ideology that bring into a state of increased isolation and estrangement of separate members of the society, and as a result – to destructions. However, one's excess society integration, when his/her individuality is suppressed or the freedom is limited or the chances of self-realization are reduced, also promotes the upgrowth of individual's aspirations. Potential source of destruct conduct is the abrupt descent or interrupted ascent of the social mobility. As well as the enhancing number of household and economical problems, the plenty of negative, frightening information, the altering role of the family stimulate the rising of subversive impulses. An individual's condition of socialization has also definite influence on forming of destructive conduct. Therefore, it is possible to understand human destructive conduct only considering his/her socio-cultural context.